ՀԱՄԱԿԱՐԳԻՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/9/1

«06» մարտի 2018թ.

ք.Երևան

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Գրիգոր Այվազյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգիչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ մնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 1959200 (մեկ միլիոն ինը հարյուր հիսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

77 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները և գնացուցակը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սփյուռքի նախարարություն	«Գրիգոր Այվազյանի» ԱՁ
ք. Երևան, Վ.Սարգսյան 3	Արարատի մարզ, գ. Ուստաև,Թեհլերյան14
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԻՆԵԿՈԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011018604	Հ/Հ 2051532055341001
ՀԿՀՀ 02705838	ՀԿՀՀ 84485538
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » մարտի 2018թ. կնքված
N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/9/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը		Մատուցման հասցեն	Մատուցման ժամկետը**
1		**Համակարգչային սարքավորումների վերանորոգում**			
1.1	50311120/1	HP Compaq DC5800 համակարգչի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան սարքավորումների փոխարինումը նորով	Մայրական սալիկ socet LGA 775 կամ համարժեքը, (երաշխիք 365 օր)	ՀՀ [illegible] նախարարություն ք.Երևան ,Վ.Սարգսյան 3	2018թ մարտ ամսից մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը՝ Պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում
1.2			պրոցեսոր CPU LGA 775 socet core 2 duo E7200 կամ համարժեքը (երաշխիք 365 օր)		
1.3			կոշտ սկավառակ SATA 3 500GB (երաշխիք 365 օր)		
1.4			կոշտ սկավառակ SATA 3 1TB (երաշխիք 365 օր)		
1.5			կոշտ սկավառակ SATA 3 2TB (երաշխիք 365 օր)		
1.6			կոշտ սկավառակ SATA 3 3TB (երաշխիք 365 օր)		
1.7			կոշտ սկավառակ SATA 3 4TB (երաշխիք 365 օր)		
1.8			օպերատիվ հիշող սարք DDR2 2GB/800MHz կամ համարժեքը (երաշխիք 365 օր)		
1.9			RAM DDR 3 4GB/1600MHz կամ համարժեքը (երաշխիք 365 օր)		
1.10			տեսաքարտ PCI Express GT 640 2GB/DDR3 կամ համարժեքը (երաշխիք 365 օր)		
1.11			տեսաքարտ PCI Express GTX 680 2GB/DDR5 կամ համարժեքը (երաշխիք 365 օր)		
1.12			հոսանքի սնուցման բլոկ(power supply)		
			հոսանքի սնուցման լար(power corde)		
1.13			Մայրական սալիկի մարտկոց(BIOS battery)		
1.14		HP ProLiant DL360 G7 համակարգչի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան սարքավորումների փոխարինումը նորով	Մայրական սալիկ Intel 5520		
1.15			Պրոցեսոր Xeon E5620 2.4 GHz(երաշխիք 365 օր)		
1.16			Օպերատիվ հիշող սարք 4GB/1333 MHz PC3-8500 - 384 GB – registered (երաշխիք 365 օր)		
1.17			Կոշտ սկավառակ SAS 146 GB 10K (երաշխիք 365 օր)		
1.18		Մոնիտոր Benq E700 17" վերանորոգում	Լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը		
1.19			Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.20			Վերանորոգում(վնասված մասերի փոխարինում)		
1.21		Մոնիտոր Benq E900WD 17" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը		

1.22			Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.23			Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում ներառյալ մասերը)		
1.24		Մոնիտոր Opriquest Q281WB 20" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը		
1.25			Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.26			Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում ներառյալ մասերը)		
1.27		Մոնիտոր HP 1710 17" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը		
1.28			Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ մասերը		
1.29			Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում նորով ներառյալ մասերը)		
1.30		Մոնիտոր LG Flatron E2360V-PN 23" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը		
1.31			Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.32			Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում ներառյալ մասերը)		
1.33		APC 1500 RBC24 անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 4 x 12v7a SLA		
1.34		Mercury Smart 1500 անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 2 x 12v/9AH		
1.35		Powercom Black Knight Pro BNT-1500AP անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 12v7.2a		
1.36		E-PRO 800 VA անխափան սնուցման սարքի վերանորոգում, Ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 12V 7.5A		
1.37		E-PRO 600 VA անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 12V 7.0A		
1.38		Notebook HP Probook 4530S վերանորոգում	Մայրական պլատի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը		
1.39			Օպերատիվ հիշող սարքի 4GB/DDR2 փոխարինում նորով Ներառյալ օպերատիվ հիշող սարքը		
1.40			Կոշտ սկավառակի SATA 3 500 GB փոխարինում նորով Ներառյալ կոշտ սկավառակը		
1.41			Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 19V 4.74A		

			90W) նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.42			Մարտկոցի փոխարինում(Battery 4400mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը		
1.43		Notebook Lenovo G470 վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը		
1.44			Օպերացիոն հիշող սարքի 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը		
1.45			Կոշտ սկավառակի SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը		
1.46			Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 20V-3.25A) նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.47			Մարտկոցի փոխարինում(Battery 4400mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը		
1.48		Notebook SONY VAIO VGN-NR-498E վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը		
1.49			Օպերացիոն հիշող սարքի 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը		
1.50			Կոշտ սկավառակի SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը		
1.51			Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 19.5V-4.7A-90W) նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.52			Մարտկոցի փոխարինում(Battery 5200mAh 10.8V-11.1V) նորով ներառյալ մարտկոցը		
1.53		Notebook Toshiba Satellite A305 վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը		
1.54			Օպերացիոն հիշող սարքի 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը		
1.55			Կոշտ սկավառակի SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը		
1.56			Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 19V 4.74A) նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.57			Մարտկոցի փոխարինում(Battery 6600mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը		
1.58		Notebook Lenovo Ideapad Y560 վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը		
1.59			Օպերացիոն հիշող սարքի 4GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը		
1.60			Կոշտ սկավառակի SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը		
1.61			Սնուցման բլոկի փոխարինում(		

			Power Supply Laptop 19V 4.74A) նորով ներառյալ սնուցման բլոկը		
1.63			Մարտկոցի փոխարինում(Battery 6600mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը		
2		**Տպիչների վերանորոգում**			
2.1		Տպիչ HP laserjet 1505n վերանորոգում	Դիագնոստիկա		
2.2			Պրոֆիլակտիկա		
2.3			Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը		
2.4			Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը		
2.5			Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը		
2.6			Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը		
2.7			Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը		
2.8		Բազմաֆունկցիոնալ տպիչ MF LaserJet M1522 MFP վերանորոգում	Դիագնոստիկա		
2.9			Պրոֆիլակտիկա		
2.10			Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը		
2.11			Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը		
2.12			Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը		
2.13			Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը		
2.14			Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը		
2.15			Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպ		
2.16		Տպիչ HP LaserJet P1102 վերանորոգում	Դիագնոստիկա		
2.17			Պրոֆիլակտիկա		
2.18			Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը		
2.19			Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը		
2.20			Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը		
221			Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը		
2.22			Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը		
2.23		Տպիչ HP LaserJet 1018 վերանորոգում	Դիագնոստիկա		
2.24			Պրոֆիլակտիկա		
2.25			Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը		
2.26			Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը		
2.27			Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը		
2.28			Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը		

2.29			Կարաորոնի փոխարինում նորով ներառյալ կարաորոնը		
2.30		Տպիչ HP LaserJet P2055d վերանորոգում	Դիոդնուտիկա		
2.31			Պրոֆիլակտիկա		
2.32			Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը		
2.33			Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը		
2.34			Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը		
2.35			Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը		
2.36			Կարաորոնի փոխարինում նորով ներառյալ կարաորոնը		
2.37		Սկաներ Samsung SCX-3400 վերանորոգում	Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը		
2.38		Սկաներ Xerox DocuMate 632 վերանորոգում	Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը		
2.39		Պատճենահանող սարք CopyCentre C118 վերանորոգում	Վառարանի փոխարինող նորով ներառյալ վառարանը		
2.40		Պատճենահանող սարք Canon IR 2018 վերանորոգում	Վառարանի փոխարինող նորով ներառյալ վառարանը		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018604
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գրիգոր Այվազյան» ԱՁ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14
«ԻՆԵԿՈԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 2051532055341001
ՀՎՀՀ 84485538

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 12» մարտի 2018թ. կնքված
N ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/9/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		1959200
			-			921600			1843200			1959200		

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018604
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Գրիգոր Այվազյան» ԱՁ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2051532055341001
ՀՎՀՀ 84485538

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«22» մարտի 2018թ. կնքված
N ՀՀՄՆ-ԳՀՇՁԲ-18/9/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«12» մարտի 2018թ. կնքված
N ՀՀՍՆ-ԳՀԾՁԲ-18/9/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (միաստիճան)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն